



**Գ Ա Ր Ե Գ Ի Ն** ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՌՈՒՈՅ  
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ  
ԿԱԹՈՂԻԿԵ ԷԶՄԻԱՇՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂՁՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ  
ԿԻԼԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ  
ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԿԱՐԴԱՊԵՏԱՅ,  
ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԽԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՄՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ  
ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԵՇՏՕՆԷՅ ԵՒ ՄԻՐԵՑԵԱՆ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՅԵԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

**Տ** օճ է այսօր Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի, Մայր Տաճարի Եկեղեցւոյ  
Հայաստանաց, հաստատեալ ի վերայ հիման սրբոց Սաքեղոց Թադեոսի և Բարթողիմէոսի,  
յուսանև կերպարորէալ երկապակամար տեպեամբն Տօրն մերոյ հաւատոյ՝ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և  
հռչակեալ որպէս կրօն ապգիս Հայոց հրամանաւն արքային մերոյ Մեծին Տրիատայ քաջապնի և  
հաւատացեալի:

**Ի** մաստալից զուգորդութեամբ՝ ընտրեցինք այս տօնը իբրև առիթ և թուական Մեր  
Հայրապետական անդրանիկ կոնդակին: Այս օրը Կաթողիկէ Ս. Էջմիածնի հիմնադրման  
հրաշքաւան դրուագին վերականգնացման պահն է ողջ հայութեան գիտակցութեան և կեանքին մէջ:

**Ա** անենաքաղցը սիրով կ'ողջունենք քեզ, ժողովուրդ հայոց, ի Մայր Հայաստան և ի ծագւ  
աշխարհի: Եւ առաջին հսկ վարկեանն կ'ուզենք որ զիստաւ, որ Մեր տկար անձն է ի բիւրի ողջոյն այս  
խօսքը որ կը փոխանցուի քեզի անդրանիկ կոնդակի այս բառերն: Ան կու գայ Ս. Գրիգոր Լուսաւորչի  
ամենալալոց և անալոթիկ հաւատքին, որուն խոսացեալ և մարմնացեալ անունն է ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ  
և մականունը՝ ՄԱՅՐ ԱՌՈՒ:

**Բ** ազգի՛ք մեր ընկալման հոգեղէն զգայարանը և պիտի զգար որ այս խօսքը կու գայ ձեզի  
սրբաճաճանց այն վայրէն, ուր մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի շնորհամբի և հրաշագործ ձեռքը  
նսկի ուռնակով բարեց և օրհնեց Հայոց հողը, ուր երկնքի և երկրի տարբ համըրոյ դրոշմունցաւ որպէս  
հիմնախարիվար տարբ եկեղեցւոյ զոյաւունս իբրև սեփական Եկեղեցին Հայաստան աշխարհիւ, հայրենի  
պետութեան և հայկազան ապգիս:

«Խորհուրդ մեծ է սքանչելի...»:

որ մշտագնաց և տիրական ներգործութեամբ կնքեց և շնչաւորեց ողջ պատմութիւնը հայոց, անցնող  
տաւանեթ դարերու ընթացքին, և կը դրոշմէ ու կ'ոգեշնչէ այսօր, ու ապառիվարաւ պիտի կերպարուի ու  
հոգեպարտէ ապագային գալիք բոլոր դարերը հայ ժողովուրդի յանրաժգնաց վեանքին:

**Խ** ռաւարկական ծաղաղութեամբ փառք կու տանք Ամենափնաւ Սասունծոյ, որ Սուրբ Էջմիածնը և  
անոր խորհուրդն ու հոգեմտնող և պաշտելի ներգործութիւնը կենրանի պահեց հայոց եկեղեցւոյ  
և հայ ժողովուրդի հոգեկամութեան, բարեպաշտութեան և ազգային գիտակցութեան ու կեանքին մէջ,  
մեր հայրենի Հայաստան աշխարհէն մինչև համայն աշխարհի չլուս ծագելը, ուր հայ մարդիկ ապրեցան  
ու կ'ապրին:

**Ա** նցնող տաւանեթ դարերուն, Ս. Էջմիածնի ձայնը հնչեց հայրիկ երեսուն Հայրապետներու  
աղօթքով, խօսքով ու գիրով, այցելութեամբ և հանդիպմամբ: Այսօր այդ ձայնը կը հնչէ Մեր

խոնարհ անձին մեքեն, որպես հարիր երեսուն մեկերորդը այն աստուածահաճող և ազգբնտիր Հայրապետներու շրջափն օղակներուն, որոնք սին և գիշեր իրենց կենարք վերածնցին իւր-արցունքի Լուսաւորի կանթեղին յոյզ անմար և մշտաժաթ ու շողարձակ պաներու համար հայ ժողովորդի կենարք ճանապարհներուն որպէս ճրագ ուղեցոյց:

Մեր խօսքը կ'ողողեր նախ մեր Ս. Եկեղեցւոյ Լուիսրապետական Արտներուն և անոնց գահաւակներուն՝ Մեր սիրեցեալ հոգևոր եղբայրներուն:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Ս. Աթոռին, որ եղաւ Մեր հոգևոր սնունդն և կապմտքն փառ օձախը, որուն Միաբանական Ռիստին սպասաւորը եղանք քառասուն յոյս տարիներ, որուն գահաւակը ըլլաւ պատրիարք Մատնած արծաւի ըլաւ վճէր տաննետը տարիներ շարունակ, և որուն հանդիպ կը տածենք հոգեւան կապուածութեան ամենաշքեմ պգացունքներ:

- Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատկաւունքի Աթոռին, անոր գահաւակին, քրիստոսական արքայադէպ աղօթքից պահպանման ու մեր եկեղեցւոյ հոգևոր ծառայութեան պարգեւան լուիսրած Սրբոց Յակոբեանց տարիներուն, որուն հանդէպ միշտ ունեցած ենք խոր սեր և յարգանք ու բարձր գնահատանք:

- Նուստնուստպալոյ Հայոց Պատրիարքութեան պատկաւունքի Աթոռին, անոր գահաւակին, հոգևորական դասուն և Լկզային-Եկեղեցական ժողովոյ, որոնց հանդէպ միշտ ցուցաբերած ենք սիրոյ և համակարգի ջերմ սիրաբերում բարձրօրէն արժեքաւորելով անոնց կապուածութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ կենտրոնի տանդիւրեանց:

Կր հաստատեմ, որ անցեալին մեր Եկեղեցւոյ Լուիսրապետական Աթոռներու կատարած մեծ դերը առանձն պտղաբերութեամբ պիտի շարունակուի Հայ ժողովորդի վերածարկէպ կենարքի ներկայ այս շրջանին, որ այնքան ճակատագրական նշանակութիւն ունի մեր պոյի պատմութեան ատորջ կերտում և ապագայի պարգեւան համար: Հարկ ի վերայ մեր կայ, որ Հայ ժողովորդի պատմական կենարքն մէջ շրջադարձային կարեորութիւն ունեցող այս օրերուն գործենք որպէս մէկ Եկեղեցի, որովհետեւ ենք մէկ Եկեղեցի, լնդ հոգևոր վերին գլխաւորութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Անեան Հայոց Կաթողիկոսութեան և Ներդաշնակ լծակցութեամբ մեր Լուիսրապետական Աթոռներուն: Միայն այդ գործելակերպով է որ պիտի առատ պտղաբերութեամբ պսակուի մեր Լուսնեպական Մայր Եկեղեցւոյ ընդհանրական առաքելութիւնը և միայն այդ գործընթացով է որ վաղի պիտի շահինք յայս ուղջ քրիստոնէական աշխարհին, բոլոր բոլր եկեղեցիներուն և համայն մարդկութեան, անոնց ընդմիջով մեր Ս. Եկեղեցւոյ կենտրոնակ բաժնիք համաքրիստոնէական միութեան և եղբայրութեան վերստեղծումի՝ Քրիստոսեան հրամայականին ներքև:

Մեր աղբն անկեսաձգելիօրէն որուած է Հայաստանի մէջ քրիստոնէութեան որպէս պետական կրօն հռչակման կամ մեր եկեղեցւոյ կապաւորարական, պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի տօնակատարութեան համալսական պարտաւորութիւնը:

Մեր նշանակալիշատակ նախորդին՝ հանգուցեալ վաղեմ Ս. Կաթողիկոս օրով և միտաւորական որոշումով Հայաստանեայց Եկեղեցւոյ Լուիսրապետական Աթոռներու գահաւակներուն, այդին ծրագրումով է որպէս մէկ Եկեղեցի անոր արժանաւակէպ պանծացման համար յատկէ համակարգ, որուն գործարարութեամբ պէտք է լծուինք անրապաղ: Միա ոսկեղէն ճանապարհ մը մեր

Եկեղեցւոյ միութեան պարգեւան և մեր Եկեղեցւոյ առաքելութեան լիակատար արժուորան, որով միայն կրնանք նոր պայծառութիւն ընծայել մեր նորոգեալ ժողովորդին և մեր նոր պետականութեան մշտագեղ յաւաքելիութեան հեռակարգով, ի Մայր Հայաստան և յարուստանուն:

Մեր պոյի ջերմ խօսքը ու հայրական սիրոյ ողորդը Մայր Աթոռը համայն եպիսկոպոսական դասուն, վարդապետաց, քահանայից, սարկաւազաց, ուսուի մանկանց Եկեղեցւոյ, բոլոր այն սպասաւորներուն, որոնք Մատնոյ լոյսն և ձեռնադրութեան ու օձան շնորհագործ պօրութեամբ կանուած են միասնական Սուրբ Երրորդութեան թարգմանը ըլլալու երկրի վրայ, և հայ ժողովորդի պատկաներուն մօտ:

Սիրելիք, հոգևորականներուն կեանքն է ձեւաբան և կենդանի թարգմանութիւնը Քրիստոսի սուրբ Անեստասիին, ինչպէս մեր Տէր Ինք ըսաւ Իրեն համար. «Ես եմ ճանապարհի, ձեւարտութիւն և կենարք»: (ՅՄԿ, ԺԴ ճ), «Որ ետնեն փա» ետնա կ'ալանք»: (ՅՄԿ, ԺԴ ճ): Քրիստոսի Անեստասիը գիր չէ՞, գիրն առաջ, գիրն սեր և գիրն ետք՝ կեանք է, ապուած կենարք մարդոց ապրած կենարքին մէջ: «Ես եկի զի փկեան ունեցին, և տաւել եւ ունեցին»: (ՅՄԿ, Ժ. 10): Հոգևորականներուն կենարք աղօթքով բարաւոր և անձնորական, ինքնարարեալական գործով ճառագայրուն՝ ժողովորդին կողմէ ընկալելի Քրիստոսի հաստատախորթան ամենին հաղորդական և աղորդական գրասական է: Անեստասիի քաղաքութիւնը կենարքն կը բխի, Յիսուսի՝ կենարքն, և կ'անցնի մեր կենարքերու մէջն, փոխանցելով համար ժողովորդին կենարքն: «Մենք և ուսուցանել»: Մը՝ է Քրիստոսեան իսկաւորիք ոճը Անեստասիի քաղաքութեան և քրիստոնէական հասարակ կենտարուն մեր աղօթելի կենարքն մէջ: Տարբեր չի կրնար ըլլալ մեր՝ Քրիստոսի սպասաւորող հոգևորականներուն ոճը: Երբեք չմոռնանք մեր Տիրոջ խօսքը. «Որ արագէ և ուսուցէ» նա մեծ կոյեցի յարգաւորեան երկիւղ» (ՄԼՍԹ, Ե. 19) Ինչպէս Ս. Առաքելայ իր պատուիրէ, «Օրինակ լինիքի հաստատացող բանիք, գնացիք, սիրով, հաստատել, պրօքնեալ» (Մ. ՏԻՄ. Գ. 12):

Պատմութեան վկայութեամբ կը հաստատեմ նաև որ մեր Սուրբ Հայրերուն ընդհանուր և տիրական ոճն այլ ալ եղաւ անցնող դարերուն: Սկսալէ, մեր ազգին համար քրիստոնէութիւնը չէր կրնար ըլլալ այն կենդանի հաստաք որ լիցքաւորեց և ուղից հայութեան կենարքը անցնող շուրջ երկու հազարամեակներուն, և առանց որուն՝ մահուան փորձութիւնն տեսականապէս յանգստած հայութեան կենարքն առեղծապաշտելանքին շարունակումը անկարելի ու անբացատրելի պիտի ըլլաւ:

Մենք հոգևորականներին պիտի կարենանք առել կանգելի և անկեթօքն լուծ. «Որ ետնս ցնեմ» ետնս ց'գրիստոս» և անցնելն. «և ետնս փառս մեր և փկալու ևոցա»: Լիցքը, անմահական և հասարակաց, հաղորդական ընդ Մատնոյ և գործ ժողովորդանուր որպէս բնական ճանապարհովը առաջնին: Միա՝ մեր ինքնութեան և արժանալի ճշգրիտ առանձնումը: Հոգևորականի կամուրջն է ընդմէջ աղօթքին և գործին, որ հաստատացնելը կը տանի «ի իսկալէն ի յոյս, ի մահուան ի կենան, յայպականութիւն յանապականութիւն, յանգստութիւն ի գիտութիւն ճշարտութեան իւրոյ» (ՄԼՍԳԻՐԻՐ):

Մեր ինչպի մեր ինքնութեան հարապատեղիքն: Այրու միայն կրնանք յարդի վերաորոգութեան շուրջն ապրիլ՝ փայլ մեր ժողովորդին մէջ տարածել առաջ և տարածելու համար:

Որպիկ մեր խօսքը կ'ողողենք Մայր Աթոռը բոլոր թեմէյուն, անոնց Առաջնորդներուն և

ազգային-ենդեզական ժողովականաց, հոգևորական թե՛ աշխարհական: Դժո՛ք էք շարտադիրները Մայր Աթոռին յայլակալ տեղիս ի Հայաստան երկիրն մեր հայրենի և ի ծագ աշխարհի, առ ցրունալ մանկունս Ենդեզուդ Հայաստանեայց: Դո՛ք էք այն անմեղն ու մարմինները, որոնք ժողովուրդի կամքով և Ենդեզական իշխանութան տնօրնութեամբ կոչուած են պատասխանատու դերակատարութեամբ խոսք տանիլ մեր Ենդեզուդ փրկարար սպասարկութիւնը կրօնական, դատարկական, մշակութային, բարեբարակական, ազգային, քնկերային, և համայնական կեանքի այլ բնագավառներուն մէջ:

Անսահման սիրով և բարձրագոյն աստիճանի արժեքներով կը գնահատենք մեր սպասարկութիւնները մեր սուրբ Ենդեզիին և ազգին, որոնք յանձն առնուած են և ի գոյծ կը դրօշին կամաւոր ծառայութեան սրանքի ղեկով, որ ինքնին սիրով և հոգեկան կայունամտութեան ամենէն իրական և փառելական բարացողիք արտայայտութիւնն է: Անխտարկեալ ղեկով, անհիասելի յատկատեւութեամբ, աննսահեք ընթացքով, յառաջդիմական ներուժով շարունակեցէ՛ք մեր ծառայութիւնները թեմական վերին մարմիններէն սկսեալ մինչև ծիական խորհուրդներու, հոգաբարձութիւններու, կանանց և երեսփարակաց կապականութիւններու, բարեբարակական միութիւններու մեկտարակալը ի վաղեմուն մեր պաշտօնի ժողովուրդին և ի պաշտօնողին՝ մեր փնտրողալ Ենդեզիին:

Ոչ կ'ուղղենք մեր բոլոր աշխարհիկ կապականութիւններուն և անհատ ազգայններուն, կենսից բոլոր ապարեւելներուն մէջ, կրթական մշակներուն, մշակութային սպասարկութիւն, մտաւորականներուն, գրողներուն, արուեստագէտներուն, մամուլի ծառայողներուն, քաղաքաբնակներուն, շինականներուն, արհեստավորներուն, պաշտօնականներուն, տնտեսագէտներուն, ծառայարարներու մասնագէտներուն, վաճառականներուն, փնտրողականներուն, արանց և կանանց, հրաւիրելով փրկեք աշխատունակ տեղեօգործականութեամբ արժեքներու իրենց կենսաքը և իրենց քրոնիքը խառնելու նաև Հայաստանեայց Ենդեզուդ, հայ ժողովուրդին, իրենց արարած երկիրներու պետութիւններուն, մեր հայրենիքին, անոր անկախ Հանրապետութեան հասարակաց կենսաքին: Թող մասնակցութեան, լսանաւորութեան և բարեբարակութեան հոգին ծաղիկ մեր բոլորին մէջ, որովհետև անով պիտի արժեղորած ըլլաք Մատուծի ձեպի՝ տուած բարիքները:

Ձաւակներ ի հայոց ազգի, դիտեցէ՛ք մեր շուրջը: Ողբ աշխարհի մէջ ներկայիս յատկաօրէն նշմարելի են կրօնական վերարթնութեան նշանները, որոնք օրէ օր անելի յոյս կը զգենուն և կը դառնան առաւել տարածուն և ապրեցի: Բոլորդ այլ յալ գիտեք, որ Հայ ժողովուրդի կենսից շարունակութեան քրիստոնէական կրօնը եղած է այն, ինչ որ է արիւնք մարդկային մարմնին մէջ: Առատացուցէ՛ք այդ առողջ արիւնքը որպէսզի մեր ազգային կենսիցին մէջ ան դառնալ վերականգնուցիչ և բարեփոխիչ ոյժ: Հայաստանեայց Ենդեզուդ բարեբարակութիւնը կամ բարեխորհուրդներին կենսամակարեան, հոգևոր վերելիկութեան և քրիստոնայից գործածութեան հետ է արդէնուած և անով պարմանաւոր և իրականաւոր: Ան անելի կայունալ է մեր արարուներու և վերաբերուներու ներքին վաւերականութեան, աստուածատիր պատկերի վերականգնման հետ քան արտաքին ձեւերու և ձևադրմաներու փոփոխութեան հետ:

Սենք որպէս շարժարարան, թե՛ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթո՛ք իրապ Մայր Տաճարին մէջ Մեր կաթողիկոսական օծման առիթով և թե՛ որպէս Սենեան Հայոց Կաթողիկոս Մեր ընտրութեան և գաղակալութեան առիթով ի Ս. Էջմիածին, ոչխար կառայողեցիք առաջի

Մատուծի և առաջի հաւատացեալ ժողովուրդեան «յանձն առնուլ պաշտօնս պարս ճախիկպոսապետութեան Հայաստանեայց Ենդեզուդ, և բոլորպատուող նուիրմամբ ընծայել պանծն իմ յանկթար կատարումն աստուածատիր օրհնան և կաթողիկոսական պարտոց, և առաջնորդել ազգս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան քրիստոնական կրօնից, ըստ մերոյն Ենդեզուդ դաւանութեան և ըստ Հայրապետական կարգաց և կանոնաց Աստուածապատմութեան, անստերիւր և անխտոր ընթանալով յամենայն ընդ յուսաշարիկ հետս գնացից արժանաժառանգ յարդրաց արդց առաջելոցն Թաղեալի և Բարբողիմէոսի և արքայ Տօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորիչ:

Հայաստանեայց Ենդեզուդ և հայ ազգի անդրութեան և ստեղծագործական կենսաքի մայր արքիիւր մեր դարաշունչ սուրբ աւանդութիւնն է. Բրիտանիոյ ժառանգուած և հայութեան կենսաքով կերպարուած, մեկնաբանուած ու գունաւորուած: Այդ սանդուղիքը պիտեք ի անուր և անխախտ պահել Գողոմ Առաջնիկ այնքան յստակ և պարտաւորիչ ցուցումներովն համաձայն՝ Բ. ԹԵՄ. Բ. 141, Ա. ԿՆՐԸՆԸ. ԺԲ. 11, Բ. ՏԻՄ. Բ. 2:

Բանականօրէն աւանդութիւնը քարացած սովորութիւններու ընդարձացած ձևակերպութիւններու դուժմար չէ, այլ վաղ պարունակով մշտնորոգ և կենսունակ ընդարաշարելու Մատուծի կալիքն և Բրիտանի պատգամին, որ մեր հայրերու շունչով է կենսարդարուած և պատմութեան մէջն է անօժ թայց պատմութեան չէ սահմանափակուած: Մեր Ենդեզուդ և ազգի տոնովորութեան անրակուր խարխել և մշտնորոգ աւել ընծայող ենթահողն է ան, որ կը կապմ մեր ինքնութեան պահպանման գրասկայնը, ժմուսանող այս ժամանակներուն երբ մարդկային ընդհանուր կենսիցին մէջ կը տեսնենք այնքան անմտորկայնացող, մակերեսայնացող, ապակրօնականացող և ապապապապացող բարբեր ու կենցաղակերպիւր, որոնք ստուեր կը բերեն մեր քրիստոնէական հաւատարմը և հայկական հոգիով թրծուած ազգային ինքնութեան շինք ու պայծառ պատկերին վրայ:

Հայաստանեայց Ենդեզուդ ներքին վերականգնութեան և հոգևոր ու ազգային վերապարթելի ու վերածնունդի հրաւանակներ մեր առջև կայ որպէս առաջնահերթ պարտաւորութիւն: Անկտարանի ճշմարտութեանց, հոգևոր արժեքներուն, կենսից բարոյական սկզբունքներուն քարոզութեան աշխուժացում, Հայաստանեայց Ենդեզուդ ծիսական այնքան հայրուտ աւանդութեան ժողովուրդամեծ դառնալով անկտաճակի անհրաժեշտութիւնը, գրականութեան և հայորդակցութեան այլ միջոցներով քրիստոնէական հաւատքի և հայ Ենդեզական աւանդութեանց քարով վերաշնչաւորումը և տարածումը, բարեբարակական և գործնական աշխատանքի պաշտօն միջոցներու ստեղծումը և այլ յարկից բազմով ընագաւառելի և գործունէութեան ուղիներ և եղանակներ կարիքն ունեն պատրաստուած տնի հոգևորական ապաստարներու ընտրի հոյակեր, որոնք պիտեք է ըլլան ճառագայթաբաժնակուր երկնային Լոյսին և մեր հայրերու շունչին: Մայր Աթոռի առաքելութեան ալպական և իրերայնացողից բնագաւառներ, որոնք անկտաճակի պարտաւորութեանց առջև կը ընեն մեր Սուրբ Ենդեզիին: Կոչ կ'ուղղենք մեր երիտասարդ սերունդի պատանիներուն որ բացողի գիտնան հոգևոր ապրումներուն և հայորդ ըլլան հոգեկան արժեքներուն, որպէսզի զգայուն և ասակ դառնան աստուածային կոչումին որ Ս. Հոգիոյն ներգործութեամբ կը լաժի մեր շուրջ և մեր մէջ: Գիտնաք պար լսել և խնամաբար ու արիաքար անոր ընդատացել:

Վերածննդեան և վերապարթոնի համապատասխան շարժումը այս օրերում, մեր աղօթքին ու մտածումին պարբեր կ'ողողենք ու կը սնենք մեր հայրենիքին վրայ, որ ահա չորս տարիներ է վեր Մասունժոյ օրհնութեան և հայ ժողովուրդի տրեւաբաթաւ, տաժանագին և հերոսական շանքերով մտած է նոր ձաւքով մէջ, որ պատուութեան և անկախութեան ձաւքան է ժողովուրդի ինքնիշխան կամքով որոշելի և ընթանալի: Երեսնիկ ենք որ կարողիկոս ընտրուեցանք մեր պատւ ու անկախ Հայաստանի նոր Հանրապետութեան օրով: Անհուն սիրով և անսահման նուիրումի և ինքնընծայական ցոխաբերութեամբ ու խոր յարգանքի պատգումներով կ'ողջունենք մեր այս նոր ու պայծառ թուականն հայոց արդի պատմութեան և կը մնանք ամբողջականօրէն զօրաւիգ անոր ամրացման և պարգացման:

Հայրախճաւ սիրով կ'ողջունենք մեր պետութեան բոլոր պատանդները ազգութիւն և վաճառքէն Նահապետին սկսելով մինչև Գորգազին իտրիտիկ անդամները, կառավարական կապով, բանական ու բոլոր պարզօնեաները զաւիտանելով իրենց նուիրումը այս աննայտաւորին և ճակատագրական օրերու պայմաններուն տակ, և ազանքով որ կրօնով, ազգասիրութեան ու հայրենասիրութեան յայնախօի, անշահանկաւոր և անմահախոհական պատգումներով ու վերաբերումով տառել ևս արմատաւորուի և անկախութեան ձաւքով անք յետեւած անկախութիւնը և ժողովուրդին կենսքը պարզանայ բնականոն կենսիկ պայմաններու տաճերով ու հայրենիքին մէջ, ողջ հայութեան իշտուել որ անվերապահ մասնակցութեամբ:

Չմոռնանք երբեք, որ մահապիւտ ցեղասպանութեան կրպակն ենք ըլլալ եկած և ութսուն տարիներու վերապարթումի կամքով ենք վրախուած: Չմոռնանք, որ այսօր Արցախի հայութեան արդար գոյապայքար մեր բոլորի նահանգներէն ու քաղաքներէն և քաղաքներէն կարիքն ունի: Չմոռնանք, որ մեր ժողովուրդի արդար իրաւունքներն հետապնդումը կը մնայ մեր նահատակներն անմահանցելի կտակը: Եւ այս բոլորին սիրով մեր ազգային ինքնութեան արժանապատուութեան վորացումը մեր հասարակաց և նուիրական պարտքն է:

Ի դարու այս վերջին տարիներուն առաւել և շեշտ կարևորութիւն է ստացած քրիստոնէական եկեղեցւոյ միութեան որոնումը և համայն եկեղեցիներու կենսարին մէջ անոր վերակենսաւորման կարիքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը կոչուած է նոր և ուժգին թափ տալու միջեկեղեցական յարաբերութեան այն բոլոր բանքերուն, որոնցմով կարելի պիտի ըլլայ կենդանի հայորդակցութեան մէջ ըլլալ քրիստոնէական միւս եկեղեցիներուն հետ և անկի լայն ու գործնական դերակատարութեամբ մասնակցից դառնալ քրիստոնէական միութեան համար աշխատող միջեկեղեցական շարժումներու և կապակերպութիւններու ու հասաստութիւններու գործունէութեանց: Արագ հայորդակցութեան միջոցներով յատկանշուած ներկայ ժամանակներուն՝ մեկուսացում և կրկնացում կրնա լաճել միայն լճացումի ինչ որ իրարէ կը բանալ ձաւքան որ կը տանի դէպի աղքատացում, ուժալքում, ընդարձացում: Մեր սուրբ եկեղեցի իր հնապաշտան ճոխ անտրուական մաս կը կապէ այն կենսքին որ Զրիատոսի խորհրդական մարմնով՝ ներգործութիւն է ի մէջ ժամանակի և ի վերայ ճրկի: Մեր սուրբ եկեղեցին կարիքն ունի այլ եկեղեցիներու հետ սերտ յարաբերութեամբ անոնց փորձառութեան իրաւունք կողմերը անելու որպէս զրգիւն և մղում, և՛ փոխադարձաբար՝ իրեն

յատուկ հոգեւոր, օրական, աստուածաբանական և եկեղեցական ու մշակութային ծառանգութիւնները բաժնելու այլ քրիստոնէական եկեղեցիներուն հետ:

Ահա, կանգնած ճրկորդ հապարամեակի վերջալոյսի և ճրկորդ հապարամեակի արշալոյսի միահաւանական հանգրուանին, Հայրապետական այսու Կոնդակու կը իրաւորենք ձեզ բոլոր անկողին, հայ ժողովուրդի պատանքեր, որ պատրաստեք ձեռ անձերն որպէս ընդունարան շտրիսց Հոգւոյն Սրբոյ: Վերասին ու մշտանորոգ ծննդեան պէտք ունիք բոլոր: Այլ վերածննդ Սուրբ Հոգւոյն ներգործութեամբ տեղի կ'ունենայ: «Պարտ է ձեզ ծանել վերադին: Չի հոլով ուր կամի շնչէ, և Կմայն նորա յեն, այլ ոչ գիտես ուտի»՝ գալ կամ յո՛՝ երթայ, սոյնպէս և ամենայն ծննդէն ի Հոգւոյն (ՅՈՒՆԼՕ, Գ. Թ): Այո, մենք չենք գիտեր, չենք կրնար գիտնալ ո՞ր կ'երթանք որպէս վերածննդ մարդ: Դա Մասունժոյ գործն է: Մերինը՝ ընդահարման պարտքն է: Բայց քաջ գիտենք որ Մասունժոյ գիտածն և ըրածը մեր բարիքն է միայն, թէ՛ անհատական և թէ՛ հասարակական մեր գոյութեան բարօրութիւնը, որ երկնի արքայութիւնն է՝ ի ներք ի մեզ՝, գերագոյն և անգերապանելի երջանկութեան սկզբնաբոլորը:

Այլ գոյալիճակը, ապրելու եղանակը Մասունժոյ Բ'ը ցոյց տուած է մեզի Իր Միածին Որդւոյն մարդեղութեամբ, Ս. Հոգւոյն յարաշարժ ներգործութեամբ, Աւետարանին և Ս. Եկեղեցւոյ Մասունժոյն անընդմէջ կենսագործմամբ: Այլ գոյալիճակին փոխը ունեցած և մեզի փոխանցած մեր հայրենք անցնող երկու հապար տարիներու հետևողական հաւատարմութեան սիրագործութեամբ: Այլ գոյալիճակը Ս. Պողոս Առաքելի կեպարածով կենսից այն պատկերն է, Կրի կը գտնենք Կալատաստից ողորդ իր թուրքին մէջ, կենսալիճակ՝ որուն մէջ Ս. Հոգւոյն պատուութիւնը իր տեսնումին ջիւղ յատկութեան և կը վայելուին լիազոյն գոհունակութեամբ: Միայն ոսկի շարքը Ս. Հոգւոյն պատուներուն: «Ար, որաւորութիւն, հաւաքութիւն, համբերութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հասարգ, հեղուկութիւն, ժողովուրդի» (ԳՄԼ, Ե. 22-23): Երբ այս առաքինագործ ոյժերը կենսիկ վերածնունդ՝ կենսքը կ'ըլլայ իմաստալի, բերկրալի, յարթանակ կ'ընայ մահուան և ճանապարհ յափտնակալութեան: Երբ այս հոգեկան ոյժերը տիրեն մեր կենսիկ մէջ՝ այն ատեն մեր գոյութիւնը որպէս մարդ, որպէս ազգ, որպէս եկեղեցի և որպէս պետութիւն՝ կը դառնայ ճշմարիտ և պերճաւիտ վկայութիւն Մասունժոյ փառքին, բարիք՝ մարդկութեան և պատկ պարծանաց հայրենեաց մերոց Հայաստանեան:

Շնորհ Տեառն Մասունժոյ, Հօր և Որդւոյն և Սրբոյն Հոգւոյն և օրհնութիւն Սրբոյ Առջին Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և լոյսն ի տեղերէ իջնալ Որդւոյն միածին եղիցին ընչ ձեզ ընդ ամենեանս. ամէն:

*Զարմեկ*

ԳԼԻՆԳԼԻՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՍՆՆԱՅՆ  
ՀԱՅՈՑ

Տուաւ կողակա ի 18-ն Յունիսի,  
Յակի Տեառն 1995 և ի թուին Հայոց ՌԵԽԻ  
ի Մարտիկան Սրբոյ Էջմիածին  
ի Տօնի Կաթողիկոս Սրբոյ Էջմիածին  
Հմր. 1 Ս 11

